Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.04.2019թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Լ. Սարգսյան - ՀՀ ՖՆ ՀՖԿ քաղաքականության վարչության բյուջետային գործընթացի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Անդամներ

Ս. Թունյան - ՀՀ ՖՆ ՀՖԿ քաղաքականության վարչության ՊՆՖՀ քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Շիրխանյան – ՀՀ ՖՆ ՀՖԿ քաղաքականության վարչության ՊՆՖՀ քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Պողոսյան - ՀՀ ՖՆ ՀՖԿ քաղաքականության վարչության բյուջետային գործընթացի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Հ. Բաղդասարյան - ՀՀ ՖՆ ՀՖԿ քաղաքականության վարչության պետական ներքին ֆինանսական հսկողության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՀՀ ՖՆ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, վավերապայմանները

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/19» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Մաստեր Սթայլ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01571846, հասցե՝ ք. Երևան, Սարմենի փող., 1 շենք, էլ հասցե՝ gnumner@masterstyle.am
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Ար Սի»	ՀՎՀՀ՝ 01003762, հասցե՝ ք. Երևան, Կարապետ Ուլնեցու փող., 58/1 շենք, 6-րդ հարկ, սեն. 608, 609, էլ հասցե՝ kharutyunyan@edrc.am

ՍՊԸ	

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն, որ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 4-ում՝ գնային առաջարկում «ընդհանուր գինը» սյունակում տառերով և թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, միաժամանակ արժեքի և ինքնարժեքի տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի տառերով գրված արժեքին:

Մյուս մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/19 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացվում են հավելված 1-ում

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին:
2. Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:
3. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
4. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

5. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/19 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Լ. Սարգսյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Ս. Թունյան
	_____	Ա. Շիրխանյան
	_____	Ա. Պողոսյան
	_____	Հ. Բաղդասարյան
Գնումները համակարգող՝	_____	Ա. Աղաբաբյան

Հավելված 1

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)					
		«Մաստեր Սթայլ» ՍՊԸ			Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	«Հանրային հատվածի ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ներգրավված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստում» դասընթաց (նախահաշվային գին՝ 9 000 000 ՀՀ դրամ)	5 760 000		5 760 000	4 990 000	998 000	5 988 000